

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 05

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ

06.12.2013թ. գիտական խորհրդի նիստի

Նախագահ՝ Վ. Գրիգորյան

Քարտուղար՝ Թ. Խաչատրյան

Գիտական խորհրդի 56 անդամներից ներկա էին 40-ը:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. ԳՊՄԻ-ի արտաքին կապերի 2012-2013 ուստարվա աշխատանքային գործունեության հաշվետվություն:

Ձեկ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան

2. Ուսանողական գիտական ընկերության 2012-2013 ուստարվա հաշվետվություն:

Ձեկ.՝ ՈւԳԸ-ի նախագահ Լ. Մարգարյան

Ռեկտոր Վ. Ֆ. Գրիգորյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 40 անդամներ. կողմ՝ 40, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1.ԼՍԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ի արտաքին կապերի 2012-2013 ուստարվա աշխատանքային գործունեության հաշվետվությունը (Ձեկ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան):

Ա. Ֆարմանյանն իր ելույթի շրջանակներում կետերով ներկայացրեց այն ծրագրերը, որոնցում ներառված է ԳՊՄԻ-ն:

1.Եվրամիության Տեմպուսի "HEN-GEAR" ծրագիր /2012-2015/, որի արդիականությունը և անհրաժեշտությունը գիտակցվել է ինստիտուտի ներքին շահակիցների շրջանում: Ծրագրի շնորհիվ 1 տարվա ընթացքում կատարվել են լուրջ աշխատանքներ, որոնցից հատկանշական է,

մասնավորապես, սոցիոլոգիական հետազոտության գործիքներից հարցաթերթիկների մշակումը: Հարցաթերթիկի բովանդակությունը քննարկվել է ծրագրի մասնակից հայաստանյան բուհերի հետ, որի արդյունքում կատարվել են ճշգրտումներ: Մշակված հարցաթերթիկը կկիրառվի 2014 թվականի շրջանավարտների համար: Ծրագրի շրջանակներում արդեն իսկ ստեղծվել է առկա ուսուցմամբ բակալավրիատի շրջանավարտների տվյալների բազա: Մուտքագրվել են 2012-2013 ուսումնական տարվա 400 շրջանավարտների տվյալներ /անգլերեն և հայերեն լեզուներով/:

2.Ինստիտուտի զարգացման տեսանկյունից կարևոր ծրագիր է Տեմպուսի «Արարատը», որի շրջանակներում կատարվել են կոնկրետ գործողություններ, մասնավորապես հիշարժան է «Բուհ-գործատու համագործակցության կենտրոնի» ստեղծումը, վերջինիս կանոնադրության մշակումը և հաստատումը, կենտրոնի կարճաժամկետ ռազմավարական պլանի մշակումը, վերջինիս գործունեության վերաբերյալ ներքին շահակիցների շրջանում իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված հանդիպումների կազմակերպումն ու անցկացումը, ինչպես նաև երեք սեկտորալ որակավորումների շրջանակների մշակման համար աշխատանքային թիմերի ձևավորումը:

3.Հաջորդ ծրագիրը «SuToMa –կայուն տուրիզմի կառավարման բնագավառում բակալավրի և մագիստրոսական միջազգային ծրագրերի համար նոր մոդուլների մշակում»-ն է /2012-2013/, որի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը դեռևս ցածր է ինստիտուտի ելակետային ներքին շահակիցների շրջանում, սակայն մոտ ապագայում վիճակը կբարելավվի:

4.Հաջորդ ծրագիրը «Կրթության որակ և համապատասխանություն»-ն է /2012 թվականի սեպտեմբերից մինչև 2013 թվականի դեկտեմբեր/, ֆինանսավորվում է Համաշխարհային բանկի կողմից: Այդ ծրագրի շրջանակներում ապակենտրոնացվել է որակի ապահովման կենտրոնը:

Ստեղծվել են որակի ապահովման ֆակուլտետային կենտրոններ՝ հազեցած համակարգչային տեխնիկայով, նոր կահույքով: Ծրագրում աշխատանքային թիմի կողմից մշակվել են մի շարք փաստաթղթեր (ՄԿԾ-ների մշակման, հաստատման, վերանայման քաղաքականություն և ընթացակարգեր, ուսանողների գնահատման քաղաքականություն և ընթացակարգ, պրոֆեսորադասախոսական կազմի հավաքագրման, գնահատման քաղաքականություն և ընթացակարգեր և այլն):

5.«Աջակցություն կրթությանը՝ հանուն զարգացման» Ռուսաստանի հավատարմագրային հիմնադրամի շրջանակներում իրականացվող վերապատրաստումներ ծրագրի նպատակը վերապատրաստման մոդելի առաջադրումն է՝ ուղղված այնպիսի պրոֆեսորադասախոսական կադրերի պատրաստմանը, որոնք կկարողանան վստահորեն կիրառել ուսուցողական/ընթացիկ լսարանային գնահատումը՝ օժանդակելով ուսուցման և ուսումնառության արդյունավետության բարձրացմանը:

6.Որակի ապահովման ազգային կենտրոնի կողմից 2013 թվականին իրականացվել են «Որակի արտաքին և ներքին ապահովման համակարգերի մշակում և բարելավում» թեմայով եռափուլ վերապատրաստումներ: Վերապատրաստման հիմնական նպատակն եղել է կարողությունների ու հմտությունների զարգացումը՝ միտված բուհերում ինքնավերլուծության գործընթացի արդյունավետ իրականացմանը: Վերապատրաստման դասընթացներին ինստիտուտից մասնակցել են թվով 13 աշխատակիցներ:

Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտորը նաև խոսեց նոր ծրագրերի՝ մասնավորապես "INFINITY" նախագծի մասին, որը խթանում է ուսանողների շարժունությունը:

Հարկ է նշել, որ ընդգծվեց յուրաքանչյուր ծրագրի ինչպես ուժեղ, այնպես էլ թույլ կողմերը, ինչպես ընձեռած հնարավորությունները, այնպես էլ սպառնալիքները:

Ծրագրերի իրականացման համար ինստիտուտում ստեղծվել են աշխատանքային թիմեր, որոնց անդամների ընտրությունը կատարվել է՝

հաշվի առնելով ծրագրի բնույթը, ինստիտուտի առջև դրված նպատակների առանձնահատկությունները:

Հիմնական ծրագրերի հետ մեկտեղ մշակվել են արտաքին կապերի և միջազգայնացմանն ուղղված ռազմավարական հնգամյա ծրագրի հիմնական կետերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ռեկտոր Վ. Գրիգորյանը, բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Ս. Սարգսյանը, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ս. Ալեքսանյանը:

Ս. Սարգսյանը շեշտադրեց երկու հարց. 1) Արդյո՞ք ծրագրերը կնպաստեն ինստիտուտի փուլ առ փուլ հավատարմագրմանը: 2) Արդյո՞ք ԳՊՄԻ-ի շրջանավարտների տվյալների բազայի ստեղծումը չի հանգեցնի լավագույն ուսանողների շարժունությանը դեպի Եվրոպա:

Առաջին հարցին Ա. Ֆարմանյանը պատասխանեց, որ ԳՊՄԻ-ին ներառված է եղել երկու հզորագույն ծրագրերում՝ «Պիկա» և «Դիուս», որոնք պետք է ապահովեին ինստիտուտի հավատարմագրումը: Իրականում հավատարմագրվելու համար ինստիտուտն ունի որակի ապահովման կենտրոն, որն ի սկզբանե եղել է անկախ կառուցվածքային միավոր՝ ուղղակիորեն ենթարկվելով միայն ռեկտորին: Եվ դա, անշուշտ, պետք է գնահատել որպես առավելություն: Պարզապես որակի կենտրոնն ամեն տարի պետք է իրականացնի բուհի ինքնավերլուծություն, մատնանշի առաջընթացի ուղղություններ, ավելի ակնհայտ կերպով իրականացնի իր գործառույթները: Բուհի հավատարմագրումն ինքնին բարդ գործընթաց է, և բոլոր համալսարաններն էլ այդ ճանապարհին բախվում են լուրջ արգելքների: Ինչ վերաբերվում է երկրորդ հարցին, ապա համամիտ է, իհարկե, որ կա երկրից ուսանողների հեռանալու վտանգ, սակայն այդ գործընթացն անհնար է կանգնեցնել:

Ս. Սարգսյանը նշեց, որ ինստիտուտը նախկինում էլ է կառավարել ինստիտուտի արտաքին կապերը, սակայն այդ ուղղությամբ ծավալվող

գործունեությունը եղել է առավել սահմանափակ՝ համեմատած ինստիտուտի այժմյան աշխատանքների ծավալին՝ կապված հավատարմագրման ու միջազգայնացման հետ: Թիմը լավ աշխատանք է իրականացրել: Իհարկե, կան թերություններ, քանզի իրականացվել է աշխատանք: Ս. Սարգսյանն առաջարկեց կատարված աշխատանքները գնահատել բավարար:

Ս. Ալեքսանյանը նշեց, որ ներկայացված ծրագրերը կառուցողական են և առաջարկեց կատարված աշխատանքը գնահատել բավարար:

Վ. Գրիգորյանը համաձայնեց, որ ուսանողների շարժունությանն ուղղված ծրագրերն ինչ-որ չափով ռիսկային են, քանզի կա միակողմանի շարժունության վտանգ: Քիչ հավանական է, որ եվրոպական լավագույն համալսարանն ավատրած շրջանավարտը գա ու սովորի հայաստանյան բուհում, այնուհետև աշխատի հայաստանյան աշխատաշուկայում, մինչդեռ եվրոպական երկրներում հայ ուսանողները պատրաստ կլինեն աշխատել 1000-2000 եվրո աշխավարձի դիմաց:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

ԳՊՄԻ-ի արտաքին կապերի 2012-2013 ուստարվա աշխատանքային գործունեությունը գնահատել բավարար և ինստիտուտի արտաքին կապերի և միջազգայնացմանն ուղղված ռազմավարական հնգամյա ծրագիրն արված առաջարկություններով հանդերձ ընդունել հիմք:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 40 անդամներ. կողմ՝ 40, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2.ԼՍԵՑԻՆ.-

Ուսանողական գիտական ընկերության 2012-2013 ուստարվա հաշվետվությունը (**Ձեկ.**՝ ՈւԳԸ-ի նախագահ Լ. Սարգսյան):

Լ. Սարգսյանի ներկայացմամբ՝ ԳՊՄԻ-ի ՈւԳԸ-ն հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է արժեքավոր գործունեություն, որի մասին են փաստում հետևյալ գործողությունները.

- 2013թ. ապրիլի 26-ին ԳՊՄԻ-ում կայացել է հանրապետական ուսանողական գիտական նստաշրջան, որի ընթացքում տեղի է ունեցել նաև 2012թ. ապրիլի 20-ին ԳՊՄԻ-ում կայացած հանրապետական ուսանողական գիտաժողովի նյութերի ժողովածուի շնորհանդեսը: Գիտական նստաշրջանին մասնացկել

են հանրապետության լավագույն բուհերի ուսանողները: Գիտաժողովի մասնակիցների ընդհանուր թիվը կազմել է 140. Երևանի պետական համալսարան՝ 25 ուսանող, Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ՝ 23 ուսանող, Գորիսի պետական համալսարան՝ 2 ուսանող, Գավառի պետական համալսարան՝ 8 ուսանող, Արցախի պետական համալսարան՝ 4 ուսանող և, իհարկե, Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ՝ 77 ուսանող:

- ՈԻԳԸ-ի էական նվաճումներից է հանրապետական ուսանողական գիտական նստաշրջանի նյութերի հրատարակումը,
- ԳՊՄԻ-ի ուսանողների ակտիվ մասնակցության ապահովումը գործընկեր-բուհերի ուսանողական գիտաժողովներին.
 - 2013թ. ապրիլի 25-ին Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտում կայացած հանրապետական ուսանողական գիտաժողովին ԳՊՄԻ-ից մասնակցել է 14 ուսանող,
 - 2013թ. նոյեմբերի 11-15-ն ընկած ժամանակահատվածում Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետում կայացած հանրապետական գիտաժողովին ԳՊՄԻ-ի պատմաբանասիրական ֆակուլտետից մասնակցել է 2 ուսանող,
 - 2013թ. դեկտեմբերի 3-5-ն ընկած ժամանակահատվածում Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում կայացած հանրապետական գիտաժողովին ԳՊՄԻ-ի պատմաբանասիրական ֆակուլտետից մասնակցել է 3 ուսանող:
- ԳՊՄԻ-ի ՈԻԳԸ-ն ակտիվ համագործակցում է ինստիտուտի ՈԻԽ-ի հետ՝ կազմակերպելով տարաբնույթ միջոցառումներ, որոնցից հիշարժան է 2013թ. հոկտեմբերի 28-29-ը ԳՊՄԻ-ում կազմակերպված դպրոցականների հանրապետական առարկայական օլիմպիադան «Մաթեմատիկա», «Ֆիզիկա»,

«Ինֆորմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» և «Աշխարհագրություն» առարկաներից, իսկ նոյեմբերի 16-17-ը՝ «Հայոց լեզու և գրականություն», «Ռուսաց լեզու», «Անգլերեն», «Ֆրանսերեն» և «Պատմություն» առարկաներից: Օլիմպիադայի դրական հեղինակության մասին են փաստում հանրապետության տարբեր վայրերից մասնակից-աշակերտների թիվը, որն այս տարի գերազանցել է 850-ը: Օլիմպիադայի հաղթողներին հանդիսավոր պայմաններում հանձնվել են դիպլոմներ, գովասանագրեր և մրցանակներ:

Վերջում ԳՊՄԻ-ի ՈԻԳԸ-ի նախագահը ներկաներին վստահեցրեց, որ իրենք շարունակելու են աշխատել նույն տեմպով ու հասնելու են նորանոր հաջողությունների:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Վ. Գրիգորյանը:

Վ. Գրիգորյանը նկատեց, որ ուսանողների մասնակցությունը գիտաժողովներին, անշուշտ, գովելի փաստ է, բայց և այնպես պետք է մտածել առավել խիստ պահանջների մշակման ուղղությամբ, որոնք թույլ կտան կատարել գտում, որը կապահովի լավագույն ուսանողական աշխատանքների ընտրությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- ՈԻԳԸ-ի 2012-2013 ուստարվա աշխատանքային գործունեությունը գնահատել բավարար և որոշման նախագիծն արված առաջարկություններով հանդերձ ընդունել հիմք:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 40 անդամներ. կողմ՝ 40, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նախագահ՝

Վ. Գրիգորյան

Քարտուղար՝

Թ. Խաչատրյան